ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/111

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.07.2018թ. թիվ 03/26-3/13458-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02671392) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.07.2018թ. Ե/40/671-18 գրության հիման վրա, 24.07.2018թ. նախաձեռնել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.07.2018թ. Ե/40/671-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևայլաը.

««Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ս.թ. ապրիլի 27-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որով կայանի կարիքների համար ձեռք էին բերվելու միջադիրներ, խծուծներ: Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրությամբ 5-8-րդ չափաբաժինների մասով ներկայացված ցածր գնային առաջարկով 1-ին տեղ է զբաղեցրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, որը հունիսի 15-ին ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որոնցում թիվ 5 և թիվ 6 չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Անհամապատասխանությունները շտկելու առաջարկին ի պատասխան մասնակիցը ներկայացրել է գրություն մատակարար կազմակերպության կողմից առ այն, որ հրավերում նշված չափերով պարոնիտների արտադրությունը դադարեցված է իրենց գործընկեր արտադրող կազմակերպության կողմից»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն 06.08.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 2018թ. ապրիլի 27-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով «Գնանշման հարցում» ընթացակարգ, որով կայանի կարիքների համար պետք է ձեռք բերվեին միջադիրներ, խծուծներ:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով հայտերի բացումը տեղի է ունեցել 05.05.2018թ.:

14.05.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 4 արձանագրությունը, որով ոմն «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն հրավիրվել է գնային առաջարկի նվազեցման բանակցությունների, սակայն առարկությունների պատճառով գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և պարզաբանում ստանալու նպատակով համապատասխան հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Ինչպես հայտնի է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել միայն «ՌՎՊրոջեկտս» ՍՊԸ-ն, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրություն է կազմել ոմն «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ի անունով և որոշել է այդ ընկերության մասով հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն:

06.06.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 5 արձանագրությունը, որով 5, 6, 7, 8 չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն, իսկ 4-րդ չափաբաժնով «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն հրավիրվել է առաջարկված գնի նվազման բանակցությունների:

Ծանուցում՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի կողմից «մասնակցի առաջարկած գին» դաշտում կրկին նշվել է «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ի անվանումը, ինչպես նաև 4-րդ չափաբաժնով «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն է հրավիրվել առաջարկված գնի նվազման բանակցությունների, չնայած այն հանգամանքի, որ «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն հայտ չէր ներկայացրել ընթացակարգին մասնակցելու

համար, ինչպիսի հանգամանքը հիմնավորվում է գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ:

11.06.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 6 արձանագրությունը, որով թիվ 4 չափաբաժնի մասով ընթացակարգը համարվել է չկայացած, քանի որ կրկին ոմն «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն բանակցությունների չի ներկայացել, իսկ թիվ 5,6,7,և 8 չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «ՌՎՊրոջեկտս» ՍՊԸ-ն և առաջարկվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր:

Այստեղ արդեն իսկ կասկած է առաջանում, թե ինչ կապ ունի սույն գնման ընթացակարգում ոմն «Ռեֆորստեխնոլոջի» ՍՊԸ-ն, սկզբում կարող էինք մտածել, որ գնահատող հանձնաժողովը վրիպում է թույլ տվել այլ Ընկերության անուն նշելով, սակայն երբ տեսնում ես, որ այդ Ընկերության անունը նշվել է ավելի քան թվով 3 արձանագրության մեջ, բացառում ես վրիպում թույլ տալու կանխավարկածը՝ պնդելով, որ գնահատող հանձնաժողովը սույն մրցույթով բացահայտ թույլ է տվել անօրինականություն, քանի որ գնման ընթացակարգին մասնակից է ճանաչել այն ընկերությանը, որը հայտ չի ներկայացրել:

15.06.2018թ. «ՌՎՊրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից դիմում է ներկայացվել հանձնաժողովի անդամներին, որով առաջարկվել է մատակարարել Հավելված 6.1-ով նախատեսված ապրանքները, այն պատճառաբանությամբ, որ պատվիրատուի մեղքով 5-8-րդ չափաբաժինների մատակարարումը դարձել է անհնարին, քանի որ գործընկերոջ մոտ այդ ապրանքի արտադրությունը ժամանակավորապես դադարեցվել է:

19.06.2018թ. գնահատող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 7 արձանագրությունը, որով 7-րդ և 8-րդ չափաբաժիններով մասնակցի ներկայացրած տվյալները գնահատվել են բավարար, իսկ 5-րդ և 6-րդ չափաբաժիններով՝ անբավարար:
Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի,

իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Համաձայն նույն կարգի 32-րդ հոդվածի 1-ին ենթակետի «զ» պարբերության՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Տվյալ դեպքում նույն գնման ընթացակարգով մասնակցի կողմից կարգի 32-րդ հոդվածի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ են արձանագրվել, սակայն ի հակառակն Կարգի 47-րդ կետի պահանջի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, այլ՝ հակառակը, նույն օրը գնման ընթացակարգը 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած:

Եթե գնահատող հանձնաժողովը 1 աշխատանքային օրով հետաձգեր նիստը՝ հնարավորություն ընձեռելով մասնակցին շտկել տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունը, ապա մասնակիցը կներկայացներ տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը՝ համագործակցելով մեկ այլ գործընկերոջ հետ:

Տվյալ պարագայում ՀՀ կառավարության Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգով շտկված հայտը կգնահատվեր բավարար, իսկ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն՝ որպես ընտրված մասնակից:

15.06.2018թ. դիմումով մասնակցի կողմից ներկայացվել է ընդամենը առաջարկ, որը կարող էր գնահատող հանձնաժողովի կողմից ընդունվեր կամ չընդունվեր: «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն՝ քաջատեղյակ լինելով Կարգի 47-րդ կետի պահանջի մասին՝ առ այն, որ եթե իր առաջարկը չընդունվի, ապա օրենքով սահմանված կարգով կարող է շտկել անհապատասխանությունը, որոշել է դեռևս չհամագործակցել այլ գործնկերների հետ:

Այնինչ, մասնակցի օրինական գործողությունները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են անօրինական, իսկ գնման ընթացակարգը՝ չկայացած:

Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ ՌԴ-ի տվյալ գործընկերոջ կողմից ապրանքի մատակարարման անհնարինությունը առաջացել է պատվիրատուի մեղքով, քանի որ վերջինս 2018թ. ապրիլի 27-ին հրապարակել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով «Գնանշման հարցում» ընթացակարգի հայտարարությունը և հրավերը, 05.05.2018թ. իրականացրել է հայտերի բացումը, այնուհետև նույն օրը կասեցրել է նիստը: Կասեցված նիստը վերսկսել է միայն 06.06.2018թ., այսինքն, շուրջ մեկ ամիս հետո և միայն 11.06.2018թ. է «ՌՎՊրոջեկտս» ՍՊԸ-ն 5, 6, 7 և 8-րդ չափաբաժիններով ճանաչվել հաղթող:

Եթե գնման ընթացակարգը գնահատող հանձնաժողովը չկասեցներ, ապա ՌԴ գործընկերոջ պահեստում ապրանքի նշված տեսականին չէր վերջանա և մասնակիցը կարող էր համագործակցել այդ գործընկերոջ հետ:

Այլ կերպ ասած, ստացվում է, որ այդ գործընկերջ մասով կատարման անհնարինությունը առաջացել է պատվիրատուի մեղքով, իսկ ինչպես հայտնի է ՀՀ քաղաքացիական օրենսդրության համապատասխան պարտատիրոջ մեղքով կատարման անհնարինության դեպքում պարտապանը կետանցող չի համարվում /Հիմք՝ ՀՀ քաղ. օր-ի 421-րդ հոդվածի 3-րդ մաս, 422-րդ հոդված, 432-րդ հոդված/:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ ևս մեկ անգամ նշում եմ, որ եթե գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով հետաձգեր նիստը՝ հնարավորություն ընձեռելով մասնակցին շտկելու անհամապատասխանութունը, ապա մասնակիցը կշտկեր այն, և այսօր վերջինիս հետ օրենքով սահմանված կարգով կկնքվեր պայմանագիր:

Հիմք ընդունելով վերոգրյալը խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2017թ. թիվ 03/26-3/13458-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգը»:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/111 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2018թ. թիվ 03/26-3/13458-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ն 24.07.2018թ. Ε/40/671-18 գրությունը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 05.05.2018թ. կայացած նիստի N 2, 10.05.2018թ. կայացած նիստի N 3, 14.05.2018թ. նիստի N 4, 06.06.2018թ. կայացած նիստի N 5, 11.06.2018թ. կայացած նիստի N 6 և 19.06.2018թ. կայացած նիստի N7 արձանագրությունները, «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի 06.08.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացված հայտի պատճենը.

«Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար միջադիրների, խծուծների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքների հատկանիշները համապատասխանաբար սահմանվել են ստորև նշված հետևյալ կերպով.

4. Պարոնիտ / ПОН, 2×1700×2000, ГОUS 481 կամ համարժեքը/;
5. Պարոնիտ / ПОН, 3×2000×2000, ГОUS 481 կամ համարժեքը/;
6. Պարոնիտ / ПОН, 4×2000×2000, ГОUS 481 կամ համարժեքը/;
7. Պարոնիտ / ПОН, 3×1000×2000, ГОUS 481 կամ համարժեքը/;

8. Պարոնիտ / ПОН, 4×1000×2000, ԳOUS 481 կամ համարժեքը/:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը):

Հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովը 11.06.2018թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 4-րդ կետով որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն 15.06.2018թ. «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է, որ հանձնաժողովի նիստի ավելի քան մեկ ամիս ժամկետով կասեցված լինելու պատճառով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 5-ից 8-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների մատակարարումը դառել է անհնարին՝ գործընկերոջ մոտ տվյալ ապրանքատեսակի պահեստում վերջանալու պատճառով: Ուստի հավելված 6.1-ով

ներկայացնում ենք մատակարարման հնարավոր փոխարինող ապրանքատեսակը՝ պահպանելով քանակությունը: Ընկերությունը պատվիրատուին հիշեցրել է նաև, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 05.05.2018թ.-ին, իսկ Ընթացակարգի կասեցված նիստը վերսկսվել է 06.06.2018թ.-ին:

Ընկերությունը Ընթացակարգի թիվ 6.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական բնութագրով ներկայացրել է հետևյալ տեխնիկական բնութագրերը՝

5. Պարոնիտ / ПОН, 3×1560×2060, ԳOUS 481 կամ համարժեքը/;
6. Պարոնիտ / ПОН, 4×1560×2060, ԳOUS 481 կամ համարժեքը/;
7. Պարոնիտ / ПОН, 3×1560×2060, ԳOUS 481 կամ համարժեքը/;
8. Պարոնիտ / ПОН, 4×1560×2060, ԳOUS 481 կամ համարժեքը/:

Որպես ապրանքների ծագման երկիր մասնակիցը նշել է ՌԴ-ն:

Հանձնաժողովի 19.06.2018թ. տեղի ունեցած նիստի N 7 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հայտը՝

- Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով գնահատվել է բավարար, քանի որ հրավերով պահանջվող 3×1000×2000 և 4×1000×2000 չափերով պարոնիտի փոխարեն մասնակիցն առաջարկել է համապատասխանաբար 3×1560×2060 և 4×1560×2060 չափսերով պարոնիտ: Առաջարկվող չափսերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից ընդունելի են:

- Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով գնահատվել է անբավարար, քանի որ հրավերով պահանջվող 3×2000×2000 և 4×2000×2000 չափերով պարոնիտի փոխարեն մասնակիցն առաջարկել է համապատասխանաբար 3×1560×2060 և 4×1560×2060 չափսերով պարոնիտ: Առաջարկվող չափսերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են անբավարար, քանի որ դրանցով պատրաստվող միջադիրների չափսը հնարավոր չէ ապահովել առաջարկվող չափսերով: Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգը 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ճանաչել Ընթացակարգի ընտրված մասնակից՝ 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով, և առաջարկել վերջինիս կնքել պայմանագիր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

• 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

• 46-րդ կետի համաձայն՝ ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-69/18» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

•7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հրավերի 7.17 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 4-րդ ենթակետով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերն ուղարկելու ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը նույն հրավերի պահանջներին, իսկ անհամա-պատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ պարտադիր և մանրամասն նկարագրվում են ապրանի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

•7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում

հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում նույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

• 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

• 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընկերության կողմից Ընթացակարգի թիվ 6.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական բնութագրով ներկայացված տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ՝ Հրավերի՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժիններով սահմանված ապրանքների հատկանիշների նկատմամբ:

- Ընկերության հայտը Ընթացակարգի 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով Հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար (թեև առկա են եղել որոշակի անհամապատասխանություններ, սակայն Հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես ընդունելի), իսկ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով մերժվել է՝ Հրավերով սահմանված բնութագրերին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- Ընկերության կողմից ներկայացված Ընթացակարգի թիվ 6.1 հավելվածի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական բնութագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրելուց հետո Հանձնաժողովը նույն օրն էլեկտրոնային եղանակով չի ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ չծանուցելով Ընկերությանը և չառաջարկելով վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Ընթացակարգի թիվ 6.1 հավելվածի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական բնութագրի գնահատման

արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Կարգի 47-րդ կետով սահմանված պահանջները՝ ինչի արդյունքում Ընկերությունը զրկվել է Հրավերի պահանջներին չհամապատասխանող գնահատված փաստաթղթի շտկված տարբերակը ներկայացնելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.07.2018թ. թիվ 03/26-3/13458-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02671392) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ